



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱԿՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## **«ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ» ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ ԾՆՈՐՅԱԽՈՐԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ՝ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԻՆ**

Երեքշաբթի, 26 Օգոստոսի երեկոյեան, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը «Նոր Ջուղայի Բարեկամներ» յանձնախումբի ներկայացուցիչներուն, որոնք Ազգ. Առաջնորդարան եկած էին Առաջնորդ Սրբազանը շնորհաւորելու վերընտրութեան առիթով:

Հանդիպումը առիթ ծառայեց տեղեկութիւններ փոխանցելու եւ խորհրդակցելու յանձնախումբին աշխատանքներուն ու ծրագիրներուն մասին: Ծանօթ է որ այս յանձնախումբը Ազգ. Առաջնորդարանի հովանիին տակ մարմին առած էր Նոր Ջուղայի չորրորդ դարադարձին առիթով, սակայն իր գործունեութիւնը կը շարունակէ ու անոր Նոր ծաւալ կու տայ ի ինդիր մշակութային ժառանգութեանց պահպանման ու տարածման:

Առաջնորդ Սրբազանը շնորհակալութիւն յայտնեց շնորհաւորանքին համար ու յաջողութիւն եւ յաւելեալ կենսաւորում մաղթեց յանձնախումբի գործունեութեան:

## **PRELATE MEETS WITH “FRIENDS OF NEW JULFA” COMMITTEE**

On the evening of Tuesday, August 26<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy representatives from the “Friends of New Julfa” Committee.

The committee members had come to congratulate the Prelate on his re-election as well as to impart information about their endeavors and future projects which centers on upholding and promoting the traditions and heritage of New Julfa.

The Prelate commended the dedication and service of the committee members and wished them success in all their undertakings.